# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ և ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՀԱՊՀՎՄ-ԳՀԾՁԲ-21/3

«08» նոյեմբերի 2021 թ.

ք. Երևան

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը ի դեմս ռեկտոր Գ.Պ.Վարդանյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ԱՁ Սարգիս Գասոյանը, որը գործում է վկայագրի հիման վրա, (այսուհետ՝ Վաճառող ) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 պատվիրատուն հանձնարարում է, իսկ կատարողը ստանձնում է համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 500000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

---

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

**5, ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի

համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **15** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված 2022 թվականի ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Վանաձոր Շինարարների 12
Բանկը՝ Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930009059530100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտոր---------------- Գ. Պ. [illegible]

/ստորագրություն/

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

ԱՁ Սարգիս Գասոյան
Հասցեն ք.Վանաձոր Տարոն 4 Բնլ. 3/5
Բանկ ԱԿԲԱ ԲԲԸ
Հ/Հ 220059678338000
ՀՎՀՀ 66981199

------------------- Ս.Գասոյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված
«08» նոյեմբերի 2021 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի
ՀՀ դրամ

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ծառայության | | | | | | | մատուցման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը |
| 1 | 50311120 | Լիցքավորվող տոների զանգվածը՝ ոչ պակաս քան 150 գրամ, տպաքանակը՝ տպիչի արտադրող ընկերության կողմից ներկայացված տպաքանակի չափով ±10%, էջի լցվացության՝ 5% դեպքում, որակի վերաբերյալ տոներ արտադրողի սերտիֆիկատի տրամադրմամբ<br>Լուսազգայուն թմբուկի փոխարինումը պետք է ապահովի 8000 էջ տպաքանակը<br>Մաքրող դանակի փոխարինումը պետք է ապահովի 15000 էջ տպաքանակ<br>Բոլոր փոխարինված մասերը պետք է լինեն նոր (նախապես չօգտագործված)<br>Քարտրիջի չիպի առկայության դեպքում, ընկերությունը պարտավորվում է լիցքավորելիս փոխել այն<br>Ընկերությունը պարտավորվում է քարտրիջի լիցքավորման ընթացքում տրամադրել փոխարինող քարտրիջ, որը կշահագործվի մինչ լիցքավորումը<br>Ընկերությունը պարտավորվում է յուրաքանչյուր շաբաթ՝ երեքշաբթի և հինգշաբթի օրերին, ներկայանալ ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղ լիցքավորման ենթակա քարտրիջները վերցնելու և 2 օրյա ժամկետում լիցքավորված վերադարձնելու:<br>Քարթրիջների ցանկը ներկայացված է կից Հավելված 1.1-ում<br>Ծառայություն իրականացնող կազմակերպությունը իր միջոցներով իրականացնում է սարքերի տեղափոխումը համալսարանի սպասարկման կենտրոնից (պատվեր ստանալուց հետո մինչև հաջորդող աշխատանքային | դրամ | 500000 | 1 | ք. Վանաձոր Շինարարների 12 | Պայմանագիրը կնքելուց հետո 1 տարվա ընթացքում՝ ընդ որում 2022 թվականին Ծառայությունը կմատուցվի այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | օրվա ավարտը) և հետ վերադարձը, վերանորոգումն իրականացնել առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում:<br>Սարքերի դիագնոստիկայից հետո անհրաժեշտ մասերի փոխարինումը համաձայնեցնել պատվիրատուի հետ:<br>Պայմանագրում առկա փոխարինման ենթակա կետերը ներառում են նաև մասերը<br>Բոլոր փոխարինվող մասերը պետք է լինեն նոր և նախապես չօգտագործված<br>Սարքերի ցանկը ներկայացված է Հավելված 1.1-ում | | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Վանաձոր Շինարարների 12
Բանկը՝ Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930009059530100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտոր————— Վ. Վարդանյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

ԱՁ Սարգիս Գասոյան
Հասցեն ք.Վանաձոր Տարոն 4 Բել. 3/5
Բանկ ԱԿԲԱ ԲԲԸ
Հ/Հ 220059678338000
ՀՎՀՀ 66981199

—————— Ս.Գասոյան
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 1.1*
*« 08 » նոյեմբերի 2021 թ. կնքված*
*«ՀԱՊՀՎՄ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով պայմանագրի*
Հավելված 1.1

| Չափաբաժին 1 համակարգչային սարքերի պահպանում և վերանորոգում | | Ծառայության միավորի գինը |
|---|---|---|
| HP LJ 1536DNF/cartridge CE278A | Լիցքավորում | 3200 |
| | Լուսազգայուն թմբուկի փոխարինում | 1800 |
| | Կորոտրոնի լիսեռի փոխարինում | 600 |
| | Մագնիսական լիսեռի փոխարինում | 1100 |
| | Մաքրող դանակի փոխարինում | 600 |
| HP Laserjet 1100 cartridge C4092A/ | Լիցքավորում | 3200 |
| | Լուսազգայուն թմբուկի փոխարինում | 1800 |
| | Կորոտրոնի լիսեռի փոխարինում | 600 |
| | Մագնիսական լիսեռի փոխարինում | 1100 |
| | Մաքրող դանակի փոխարինում | 600 |
| HP LJ Q2612A, Canon 4010, 2900, cartridge 303/703/ FX9/FX10 | Լիցքավորում | 3200 |
| | Լուսազգայուն թմբուկի փոխարինում | 1800 |
| | Կորոտրոնի լիսեռի փոխարինում | 600 |
| | Մագնիսական լիսեռի փոխարինում | 1100 |
| | Մաքրող դանակի փոխարինում | 600 |
| HP Laser Jet 1018 cartridge C7115A/Q2612A/ | Լիցքավորում | 3200 |
| | Լուսազգայուն թմբուկի փոխարինում | 1800 |
| | Կորոտրոնի լիսեռի փոխարինում | 600 |
| | Մագնիսական լիսեռի փոխարինում | 1100 |
| | Մաքրող դանակի փոխարինում | 600 |
| Canon FC/ E16,E30 | Լիցքավորում | 3200 |
| | Լուսազգայուն թմբուկի փոխարինում | 1800 |
| | Կորոտրոնի լիսեռի փոխարինում | 600 |
| | Մագնիսական լիսեռի փոխարինում | 1100 |
| | Մաքրող դանակի փոխարինում | 600 |
| Canon Cartridge 728,737 | Լիցքավորում | 3200 |
| | Լուսազգայուն թմբուկի փոխարինում | 1800 |
| | Կորոտրոնի լիսեռի փոխարինում | 600 |
| | Մագնիսական լիսեռի փոխարինում | 1100 |
| | Մաքրող դանակի փոխարինում | 600 |
| CANON i – sensys MF3010/ cartridge 725 | Լիցքավորում | 3200 |
| | Լուսազգայուն թմբուկի փոխարինում | 1800 |
| | Կորոտրոնի լիսեռի փոխարինում | 600 |
| | Մագնիսական լիսեռի փոխարինում | 1100 |
| | Մաքրող դանակի փոխարինում | 600 |
| CANON i – sensys LP 2900/ Cartridge 703 | Լիցքավորում | 3200 |
| | Լուսազգայուն թմբուկի փոխարինում | 1800 |
| | Կորոտրոնի լիսեռի փոխարինում | 600 |

| | | |
|---|---|---|
| | Մագնիսական լիսեռի փոխարինում | 1100 |
| | Մաքրող դանակի փոխարինում | 600 |
| | Չիպի փոխարինում | 400 |
| HP P1005/ cartridge CB435A | Լիցքավորում | 3200 |
| | Լուսազգայուն թմբուկի փոխարինում | 1800 |
| | Կորոտրոնի լիսեռի փոխարինում | 600 |
| | Մագնիսական լիսեռի փոխարինում | 1100 |
| | Մաքրող դանակի փոխարինում | 600 |
| HP Laserjet 200D / cartridge hp C4096A | Լիցքավորում | 3200 |
| | Լուսազգայուն թմբուկի փոխարինում | 1800 |
| | Կորոտրոնի լիսեռի փոխարինում | 1800 |
| | Մագնիսական լիսեռի փոխարինում | 600 |
| | Մաքրող դանակի փոխարինում | 1100 |
| | Լիցքավորում | 600 |
| Canon MF211 Cartridge 737 | Լիցքավորում | 3200 |
| | Լուսազգայուն թմբուկի փոխարինում | 1800 |
| | Կորոտրոնի լիսեռի փոխարինում | 600 |
| | Մագնիսական լիսեռի փոխարինում | 1100 |
| | Մաքրող դանակի փոխարինում | 600 |
| | Չիպի փոխարինում | 400 |
| Cartridge HP 17A, 19A | Լիցքավորում | 3200 |
| | Լուսազգայուն թմբուկի փոխարինում | 1800 |
| | Կորոտրոնի լիսեռի փոխարինում | 600 |
| | Մագնիսական լիսեռի փոխարինում | 1100 |
| | Մաքրող դանակի փոխարինում | 600 |
| | Չիպի փոխարինում | 400 |
| Cartridge HP 30A, 32A | Լիցքավորում | 3200 |
| | Լուսազգայուն թմբուկի փոխարինում | 1800 |
| | Կորոտրոնի լիսեռի փոխարինում | 600 |
| | Մագնիսական լիսեռի փոխարինում | 1100 |
| | Մաքրող դանակի փոխարինում | 600 |
| | Չիպի փոխարինում | 400 |
| Canon LBP 6300DN, MF 5940 DN/ cartridge 719 | Լիցքավորում | 3200 |
| | Չիպի փոխարինում | 400 |
| | Լուսազգայուն թմբուկի փոխարինում | 1800 |
| | Կորոտրոնի լիսեռի փոխարինում | 600 |
| | Մագնիսական լիսեռի փոխարինում | 1100 |
| | Մաքրող դանակի փոխարինում | 600 |
| Xerox 3117 Phaser/ cartridge 3122 D1 | Լիցքավորում | 3200 |
| | Չիպի փոխարինում | 400 |
| | Լուսազգայուն թմբուկի փոխարինում | 1800 |
| | Կորոտրոնի լիսեռի փոխարինում | 600 |
| | Մագնիսական լիսեռի փոխարինում | 1100 |
| | Մաքրող դանակի փոխարինում | 600 |
| HP LJM 130A | Լիցքավորում | 3200 |
| | Չիպի փոխարինում | 400 |
| | Լուսազգայուն թմբուկի փոխարինում | 1800 |

| | | |
|---|---|---|
| | Կորոտրոնի լիսեռի փոխարինում | 600 |
| | Մագնիսական լիսեռի փոխարինում | 1100 |
| | Մաքրող դանակի փոխարինում | 600 |
| EPSON M2140 (C11CG27405) Բազմաֆունկցիոնալ շիթային տպիչի լիցքավորում 400գ | | 15000 |
| EPSON M2140 (C11CG27405) բազմաֆունկցիոնալ շիթային տպիչի վերանորոգում (առանց պահեստամաս) | | 5000 |
| EPSON L210/ L350 բազմաֆունկցիոնալ շիթային տպիչի լիցքավորում 400գ | | 15000 |
| EPSON L210/ L350 բազմաֆունկցիոնալ շիթային տպիչի վերանորոգում (առանց պահեստամաս) | | 5000 |
| Պատճենահանող սարք | | |
| · Canon iR 2425 պատճենիքնող սարքի լիցքավորում Toner Canon c-EXV 60 տպաքանակը՝ առնվազն 10200, էջի լցվածության՝ 5% դեպքում, որակի վերաբերյալ տոներ արտադրողի սերտիֆիկատի տրամադրմամբ | | 23000 |
| Պատճենահանող սարք Canon 6216 /Canon 2316 | Լիցքավորում/Заправка | 15000 |
| | Լուսազգայուն թմբուկի փոխարինում/Барабан | 12000 |
| | Կորոտրոնի լիսեռի փոխարինում/Каротрон | 4500 |
| | Մագնիսական լիսեռի փոխարինում/Магнитный вал | 4500 |
| | Մաքրող դանակի փոխարինում/Ракель | 3000 |
| Համակարգիչների, դյուրակիր համակարգիչների և օժանդակ պարագաների վերանորոգում | | |
| Դիագնոստիկա | | 5000 |
| Պրոֆիլակտիկա | | 5000 |
| RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 1ԳԲ 800ՄՀց (DDR2 800 MHz) կամ համարժեքը | | 10000 |
| RAM փոխարինում ներառյալԴԴՌ3 2048Մբ 1333ՄՀց (DDR3 2048Mb 1333MHz) կամ համարժեքը | | 15000 |
| RAM փոխարինում ներառյալԴԴՌ4 4096Մբ 2133ՄՀց (DDR4 4096Mb 2133MHz) կամ համարժեքը | | 24000 |
| SVGA փոխարինում ներառյալ 1Գբ PCI Exp կամ համարժեքը | | 30000 |
| HDD փոխարինում ներառյալ 500Գբ ՍԱՏԱ/7200(HDD 500 GB SATA/7200) կամ համարժեքը | | 35000 |
| HDD փոխարինում ներառյալ 1TB ՍԱՏԱ/7200(HDD 1 TB SATA/7200) կամ համարժեքը | | 40000 |
| HDD փոխարինում ներառյալ 2TB ՍԱՏԱ/7200(HDD 2 TB SATA/7200) կամ համարժեքը | | 48000 |
| HDD SATA ղեկավարող սալիկի փոխարինում ներառյալ ղեկավարող սալիկը | | 12000 |
| DVD-RW փոխարինում | | 9000 |
| Պրցեսորների (P4 և բարձր) փոխարինում համարժեքով | | 48000 |
| Մայրական տպասալի փոխարինում | | 37000 |
| Վիդեոքարտերի PCI-exp նորոգում | | 6000 |
| Վիդեոքարտի PCI-exp փոխարինում | | 25000 |
| Բարձրախոսների նորոգում | | 5000 |
| ՎԵԲ տեսախցիկի նորոգում | | 5000 |
| Սնուցման բլոկի նորոգում | | 5000 |

| | |
|---|---|
| Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 450վ (Power supply unit for P4 Case 450W), կամ համարժեքը | 8000 |
| Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 600Վտ (Power supply unit for P4 Case 600W), կամ համարժեքը | 24000 |
| **Անխափան սնուցման սարքի վերանորոգում** | |
| Ղեկավարող սալիկի վերանորոգում | 6000 |
| Մարտկոցի փոխարինում 12Վ/7Ա | 9000 |
| **Մոնիտորի վերանորոգում** | |
| Վերանորոգում (վնասված մասերի փոխարինում) | 7500 |
| **Դյուրակիր համակարգիչներ** | |
| Դիագնոստիկա | 5000 |
| Պրոֆիլակտիկա | 7000 |
| HDD փոխարինում ներառյալ 500Գբ 5400պտր նոթբուքի համար (500GB 5400RPM for notebook), կամ համարժեքը | 35000 |
| RAM 1GB ներառյալ DDR2 փոխարինում | 18000 |
| RAM 1GB ներառյալ DDR3 փոխարինում | 18000 |
| RAM 2GB ներառյալ DDR3 փոխարինում | 24000 |
| Մայրական տպասալի նորոգում | 20000 |
| Մայրական տպասալի փոխարինում | 45000 |
| Ստեղնաշար touchpad նորոգում | 22000 |
| Մոնիտորի նորոգում | 10000 |
| Մարտկոցների փոխարինում | 25000 |
| **Պրոյեկտորի վերանորոգում** | |
| Դիագնոստիկա | 5000 |
| Պրոֆիլակտիկա | 12000 |
| Պրոեկտորի լամպի փոխարինում ներառյալ լամպը | 90000 |
| **Լազերային տպիչներ** | |
| Դիագնոստիկա | 5000 |
| Պրոֆիլակտիկա | 5000 |
| Վերածրագրավորում | 12000 |
| Վերանորոգում (առանց պահեստամասերի) և | 3000 |
| Վառարանի թերմոթաղանթի փոխարինում HP LJ 1020, MF3010, 1105, Canon LBP 2900, MF 4410, MF 4010, HP Laserjet1100 , HP Laser Jet 1018, Canon FC226, Canon FC120, HP Laserjet P1005, Xerox Phaser 3117MFP, Canon LBP 6300DN MF 5940 DN կամ համարժեքը | 5000 |
| Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում փոխարինում HP LJ 1020, MF3010, 1105, Canon LBP 2900, MF 4410, MF 4010, HP Laserjet1100 , HP Laser Jet 1018, Canon FC226, Canon FC120, HP Laserjet P1005, Xerox Phaser 3117MFP , Canon LBP 6300DN MF 5940 DN կամ համարժեքը | 5000 |
| Վառարանի փոխարինում | 35000 |
| Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում HP LJ | 4000 |
| Սկաներների նորոգում | 9000 |
| **Սկաներների վերանորոգում** | |
| Դիագնոստիկա | 5000 |
| Պրոֆիլակտիկա | 5000 |
| Սնուցման բլոկի նորոգում | 6000 |
| Մեխանիկայի նորոգում | 9000 |

| | |
|---|---|
| **Պատճենահանող սարքի** | 5000 |
| Պրոֆիլակտիկա | 10000 |
| Վերանորոգում (առանց պահեստամասերի) և | |
| Թերմոթաղանթի փոխարինում ներառյալ թերմոթաղանթը Canon iR 2425, կամ համարժեքը | 20000 |
| Canon iR 2425մայրական տպասալի փոխարինում նորով ներառյալ տպասալը | 55000 |
| Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ վառարանի ռետինե լիսեռ Canon iR 2425, կամ համարժեքը | 10000 |
| Վառարանի ֆետրե լիսեռի փոխարինում ներառյալ վառարանի ֆետրե լիսեռ Canon iR 2425 կամ համարժեքը | 15000 |
| Թմբուկի փոխարինում ներառյալ Թմբուկ Canon iR 2425 կամ համարժեքը | 12000 |
| Մաքրող դանակի փոխարինում ներառյալ մաքրող դանակի Canon iR 2425 կամ համարժեքը | 10000 |
| **Պլանշետների (iPad mini) վերանորոգում** | 5000 |
| Դիագնոստիկա | 5000 |
| Պրոֆիլակտիկա | 20000 |
| Նորոգում | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Վանաձոր Շինարարների 12
Բանկը՝ Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930009059530100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտոր------------------ Գ.Ռ. Վարդանյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

ԱՁ Սարգիս Գասոյան
Հասցեն ք.Վանաձոր Տարոն 4 Բել. 3/5
Բանկ ԱԿԲԱ ԲԲԸ
Հ/Հ 220059678338000
ՀՎՀՀ 66981199

------------------ Ս.Գասոյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 08 » նոյեմբերի 2021 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | |
| | | | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50311120 | համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ | 69416,7 | 138836,3 | 208250 | 208250 |

**291750 դրամի ծառայություն նախատեսվում է գնել 2022թ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Վանաձոր Շինարարների 12
Բանկը՝ Կոնվերս բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930009059530100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտոր------------------------ Վ. Վարդանյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

ԱՁ Սարգիս Գասոյան
Հասցեն ք.Վանաձոր Տարոն 4 Բնլ. 3/5
Բանկ ԱԿԲԱ ԲԲԸ
Հ/Հ 220059678338000
ՀՎՀՀ 66981199

------------------------ Ս.Գասոյան
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված 3*
*«    »          20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ԱՁ Սարգիս Գալստյան | ________________________ |
| ________________________ | ________________________ |
| գտնվելու վայրը Տիգրան Մեծի 48 | գտնվելու վայրը ______________ |
| հհ 22005967833 8000 | հհ ______________________ |
| հվհհ 66981199 | հվհհ ______________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    » «            » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «             » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ________________ | ________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| Սարգիս Գալստյան | ________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«     »          20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը                                                    Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20     թ. ______________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                                    պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20  թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

ազգանուն, անուն

ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_______________________
ազգանուն, անուն

_______________________
ստորագրություն